



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՆՐԱՄԱՆ

Թիվ 20-Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ՁԵՎԸ, ՊԵՏԱԿԱՆ, ՈՉ
ՊԵՏԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ
ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ԴՐԱՆՑ
ՊԱՏՎԻՐՄԱՆ, ՀԱՏԿԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ,
ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի 1445-Ն որոշման համաձայն՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում և ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներում օգտագործվող պետական կնիքների ձևը, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը սահմանելու, դրանց պատվիրման, հատկացման, պահպանման, ոչնչացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2) ՀՀ ոստիկանությունում օգտագործվող ՀՀ պետական կնիքների ձևը՝ համաձայն հավելված 2-ի,

3) ՀՀ ոստիկանությունում օգտագործվող պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:

2. ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-րդ հավելվածով հաստատված օրինակելի ձևին համապատասխանող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների պետական կնիքները թողնել անփոփոխ, իսկ օրինակելի ձևին չհամապատասխանող պետական կնիքները համապատասխանեցնելու, ինչպես նաև հետագա օգտագործման համար անհրաժեշտ պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների պատվիրման գործընթացը կազմակերպել սույն հրամանով սահմանված կարգով:

3. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ սույն հրամանով հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմից ներկայացված հայտերի հիման վրա կազմակերպել պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների պատվիրման և պատրաստման աշխատանքները, ինչպես նաև ապահովել պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյանների պատրաստումը:

4. ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ապահովել պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների պատրաստման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

5. Մինչ նոր մատյանների տրամադրումն օգտագործել կնիքների և դրոշմների (շտամպ) հաշվառման մատյանները:

6. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի ղեկավարին:

7. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին, քաղաքացիական ծառայողներին և քաղաքացիական աշխատանք կատարողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ



Վ.ՕՍԻՊՅԱՆ

«03», 08 2019թ.

ք.Երևան

Կ Ա Ր Գ

ՀՀ ոստիկանությունում օգտագործվող պետական կնիքների ձևերի, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը սահմանելու, դրանց պատվիրման, հատկացման, պահպանման, ոչնչացման

ԳԼՈՒԽ I

Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ ոստիկանությունում և ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներում օգտագործվող պետական կնիքների ձևը, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը, պատվիրելու, հատկացնելու և ՀՀ ոստիկանության ծառայողների (աշխատողների) կողմից պահպանելու, ոչնչացնելու կարգը:

2. ՀՀ ոստիկանությունում պետական կնիքները նախատեսված են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների և ծառայողների ստորագրությունները, իրավական ակտերը, ինչպես նաև այլ փաստաթղթերն ու դրանց պատճենները վավերացնելու համար:

3. Ոչ պետական կնիքները և դրոշմակնիքները նախատեսված են ՀՀ ոստիկանության հաշվեկշռում գտնվող գույքը և փաստաթղթերը կնքելու համար:

4. ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանում պետք է ունենա միայն մեկ պետական կնիք: Ստորաբաժանման ղեկավարի կողմից ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի ղեկավարին (*այսուհետ՝ Աշխատակազմ*) ներկայացված զեկուցագրի (*նշելով նպատակը՝ բավարար հիմնավորմամբ*) հիման վրա, ոստիկանության պետի թույլտվությամբ կարող է հատկացվել լրացուցիչ պետական կնիք՝ «2» թվի նշումով:

5. Պետական կնիքների տնօրինման, պահպանման և օգտագործման համար պատասխանատվություն են կրում ստորաբաժանումների պետերը, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների համար՝ պատասխանատու աշխատակիցները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով նրանց փոխարինողները:

6. Բոլոր տեսակի փաստաթղթերը թույլատրվում է կնքել ցանկացած գույնով՝ բացառությամբ սևի՝ պատճենի չնմանվելու նկատառումներից ելնելով:

ԳԼՈՒԽ II

Պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը

7. Պետական կնիքները լինում են կլոր, շրջանի կենտրոնում արտացոլվում է ՀՀ զինանշանի պատկերը, իսկ շրջանագծի երկայնքով՝ ՀՀ ոստիկանության անվանումը՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով, ընդհանուրը՝ ոչ ավել, քան 3 լեզվով (ձևը՝ համաձայն հավելված 2-ի):

8. Ոչ պետական կնիքները և դրոշմակնիքները լինում են ՀՀ ոստիկանության, ինչպես նաև ըստ նպատակային նշանակության անվանումներով, հայերեն տառերով, անհրաժեշտության դեպքում զուգակցելով առավելագույնը 2 օտար լեզուներով:

Գույք (պահարաններ, աշխատասենյակների դռներ (առկայության դեպքում նաև առանց ճաղավանդակների պատուհաններ), ռեժիմային զետեղարաններ, հատուկ պահեստարաններ, գաղտնապահարաններ, մետաղյա պահարաններ և այլն) կնքելու համար պատրաստվում են մետաղյա փոքր դրոշմակնիքներ (հերթական համարակալմամբ)՝ նախապես համաձայնեցնելով Աշխատակազմի հետ:

ԳԼՈՒԽ III

Պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների հատկացումը

9. Պետական, ոչ պետական կնիքները և դրոշմակնիքները (*այսուհետք՝ կնիք*) օգտագործման համար ոչ պիտանի դառնալու, կորստյան կամ նոր կնիք պատվիրելու դեպքերում պատասխանատու ծառայողը զեկուցագիր է ներկայացնում իր անմիջական ղեկավարին, վերջինս կնիք պատվիրելու նպատակով դրա նմուշը, ինչպես նաև օգտագործման համար ոչ պիտանի ճանաչված հին կնիքի դրոշմվածքը պատճառաբանված գրությամբ ուղարկում է Աշխատակազմ:

10. Աշխատակազմը, ուսումնասիրելով դրանց՝ իրավական ակտերի պահանջներին համապատասխանությունը, պատրաստման նպատակով կնիքի նմուշը գրությամբ 1 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ՀՀ ոստիկանության տնտեսական վարչություն (*այսուհետք՝ Տնտեսական վարչություն*):

11. Տնտեսական վարչությունը, Աշխատակազմի կողմից ներկայացված կնիքի նմուշի հիման վրա հնարավորինս սեղմ ժամկետում կազմակերպում է դրա պատվիրման գործընթացը: Պատրաստի կնիքը գրությամբ ուղարկում է Աշխատակազմ:

12. Աշխատակազմը ստացված կնիքը հաշվառում է կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյանում (*այսուհետք՝ մատյան*) և ստորագրությամբ փոխանցում նախաձեռնող կառուցվածքային ստորաբաժանման իրավասու ծառայողին: Ստացված կնիքը կառուցվածքային ստորաբաժանումում նույնպես հաշվառվում է մատյանում (հավելված 3) և ստորագրությամբ հանձնվում պատասխանատուին:

13. Մետաղյա կնիքները հատկացվում են հատուկ կարևորության, հույժ գաղտնի և գաղտնի տեղեկություններին առնչվելու թույլտվություն ունեցող ծառայողներին (աշխատողներին): Գործավարական աշխատանքներ իրականացնող և հատուկ կարևորության տեղեկությունների հետ առնչվող ծառայողներին տրվում են երկուական անձնական, տարբեր համարներով մետաղյա կնիքներ՝ կնքելու պահարանները և այն

աշխատասենյակների դռները (առկայության դեպքում նաև առանց ճաղավանդակների պատուհանները), որտեղ գտնվում են այդ պահարանները:

14. Տառասխալներով և սխալ անվանումներով պատրաստված կնիքը ենթակա չէ օգտագործման: Նման դեպքերում Աշխատակազմը ձեռնարկում է միջոցներ այն նորով փոխարինելու և հանգամանքները պարզելու համար:

ԳԼՈՒԽ IV

Կնիքների պահպանումը

15 Ծառայողները (աշխատողները) անձնական պատասխանատվություն են կրում կնիքների օգտագործման ու պահպանման համար:

16. Արձակուրդ, գործուղման մեկնելիս կամ այլ պատճառներով ժամանակավոր բացակայության դեպքում՝ կնիքները (բացառությամբ մետաղյա կնիքների) ստորագրությամբ հանձնվում են ստորաբաժանման քարտուղարություն կամ գործավարական աշխատանքներ իրականացնող ծառայողին: ՀՀ ոստիկանությունում այլ պաշտոնի նշանակվելիս կամ ծառայությունից ազատվելիս, կնիքները, ՀՀ ոստիկանության պետի 07.11.2012թ. թիվ 4500-Ա հրամանի պահանջներին համապատասխան, հանձնվում են փոխարինող ծառայողին (աշխատողին): Մատյանը վարող ծառայողը միջոցներ է ձեռնարկում ծառայողի (աշխատողի) ազատման կամ տեղափոխման դեպքում նրա պատասխանատվության տակ գտնվող կնիքը հանձնելու ուղղությամբ:

Պատասխանատու ծառայողի կողմից մատյանում կնիքները չհանձնելու դեպքում, փոխարինող կամ մատյանը վարող ծառայողը զեկուցում է ըստ վերադասության՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

17. Կնիքները և մատյանները պահվում են ոստիկանության պետի 18.02.2005թ. թիվ 1-Նգ հրամանով հաստատված հրահանգի 5-րդ գլխի պահանջների համաձայն:

18. Շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով կնիքն օգտագործելու, այլ անձանց փոխանցելու կամ կորցնելու դեպքերում պատասխանատու ծառայողը ենթակա է կարգապահական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ V

Կնիքների ոչնչացումը

19. Կառուցվածքային ստորաբաժանումում նոր կնիքը ստացվելուց և ստորագրությամբ պատասխանատուին հանձնելուց հետո օգտագործման համար ոչ պիտանի դարձած, ստորաբաժանման անվան փոփոխման, անհրաժեշտության դեպքում նաև կորած և հայտնաբերված կնիքները ոչնչացվում են կառուցվածքային ստորաբաժանումում գործող փորձաքննական հանձնաժողովի կողմից՝ կազմելով արձանագրություն երկու օրինակից՝ արձանագրության մեկ օրինակը առաքելով Աշխատակազմ՝ ի տնօրինություն:

ՁԵՎ

«Նստիկանությունում օգտագործվող «Նստական կնիքների

Հ/Հ	Կնիքի անվանումը	Դրոշմվածքի պատկերը
1	«Նստական կնիք»	

Հավելված 3
ՀՀ ոստիկանության պետի
2019 թվականի օգոստոսի « 03 » -ի
թիվ 20 - Լ հրամանի

ՁԵՎ Մ Ա Տ Յ Ա Ն Ի

Պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների հաշվառման

Սկսված է « _____ » _____ 20 թ.
Ավարտված է « _____ » _____ 20 թ.
Թերթերի քանակը _____
Հիմք: Հրաման _____ կետ _____
Պահպանման ժամկետը _____

